

## Արձանագրություն թիվ 6

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

25 հունվարի 2016թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Բ.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի քարտուղար Մ.Աթոյանը, խորհրդի անդամները, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և կուրսերի ավագները: Նիստին հրավիրվել էր մասնաճյուղի ՈՒսումնամեթոդական վարչության պետ Ա.Յ.Դավթյանը:

### ՕՐԱԿԱՐԳ

1. Դեկանի կիսամյակային հաշվետվություն:  
/զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
2. 2015-16 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:  
/զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
3. Ցուցահանդեսների կազմակերպման, դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության աստիճանի բարձրացման ուղղիների քննարկում:  
/զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
4. ԵՊՀ ԻՄ 2016-20թթ. Ռազմավարական ծրագրի քննարկում:  
/զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
5. Ընթացիկ հարցեր:

**ԼՄԵՑԻՆ** - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստում նախատեսված է հինգ հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Նա ներկայացրեց 2015թ. հուլիսի մեկից մինչև այսօր ֆակուլտետում իրականացված գործընթացների վերաբերյալ հաշտվետվություն՝ հիմք ընդունելով մասնաճյուղի զարգացման 2011-2015 թթ. Ռազմավարական ծրագիրը:

Լինելով առանձնահատուկ ֆակուլտետ, նպատակներն ու խնդիրները նույնպես տարբեր են մնացյալ ֆակուլտետներից: Արվեստի և արհեստի զարգացումը, տարածաշրջանում մշակույթային կյանքի ակտիվացումը, գեղեցիկի ստեղծումն ու դիզայներական ժամանակակից մոտեցումների տարածումը պետք է լինեն ոչ միայն ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, այլ նաև ուսանողների ամենօրյա հիմնական գործը:

Կիրառական արվեստի ֆակուլտետը 2014 տարվանից ունի երկու մասնագիտություններ՝ „Կիրառական արվեստ” և „Դիզայն”: Սեպտեմբերի մեկի դրությամբ ֆակուլտետը ուներ 88 ուսանող: Նրանցից 20-ը սովորում են պետպատվեր, իսկ 68-ը՝ վճարովի համակարգում: Աշխատակազմը բաղկացած է 18 աշխատակիցներից, որոնցից 14-ը դասավանդողներ են՝ 10-ը հիմնական, 2-ը ժամավճարային հիմունքներով, իսկ 4-ը՝ վարչական և ուսումնաօժանդակ: Ֆակուլտետում գործում են երկու ամբիոններ՝ „Գծանկարի գունանկարի և քանդակի”, „Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի” և գեղարվեստական խորհուրդ:

Մասնաճյուղում ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբնին քննարկվում և հաստատվում են յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքային պլանները, նրանց իրականացման ժամանակացույցերը՝ հաշվի առնելով տարվա առանձնահատկությունները: Այս տարի դասավանդողների առջև խնդիր դրվեց ունենալ ուսուցանվող բոլոր մոդուլների առարկայական փաթեթները՝ պորտֆոլյոներ, ինչը հաջողությամբ իրականացրին ֆակուլտետի բոլոր դասախոսները, իհարկե նրանցում կան նաև որոշակի թերություններ, սակայն յուրաքանչյուր ուսումնական տարի կարտարելագործելիս՝ դրանք կբացառվեն:

Հարկ է նշել, որ դասավանդվող բազմաթիվ դասախոսություններ անց են կացվում նախօրոք պատրաստված ցուցադրությունների ուղեկցությամբ, ինչը ավելի մատչելի և արդյունավետ է դարձնում ուսուցման պրոցեսը: Մասնագիտական առարկաների համար իրականացվում են դասավանդման նոր մեթոդների ուսումնասիրություններ և մոտեցումներ:

Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում ֆակուլտետում անց են կացվում բաց դասեր՝ մաստեր կլաս, դասալսումներ, փոխադարձ դասալսումներ նախապես հաստատված գրաֆիկի համաձայն:

Ա.Շ.Մարգարյանը ընդգծեց նաև ֆակուլտետի ուսանողության շրջանում պարբերաբար իրականացվող հարցումների կարևորությունը, որը հնարավորություն է տալիս վերհանելու թերացումները և փնտրելու ուղիներ նրանք վերացնելու ուղղությամբ:

Ֆակուլտետում գործող ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն հաճախակի կազմակերպում են գիտահանրամատչելի միջոցառումներ և ինտելեկտուալ խաղեր:

Յուրաքանչյուր ուսումնական տարի ֆակուլտետի նյութատեխնիկական բազան համալրվում է և նոր կրթական ծրագրերի իրականացման համար ստեղծում կամ վերազինում նոր արվեստանոցներ և լաբարատորիաներ: 2016թվականից ընդունելություն կիրականացվի երկու՝ «Դիզայն» և «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտություններով, ինչը նոր խնդիրներ է առաջացնում և պահանջում համապատասխան լուծումներ՝ սկսած նյութատեխնիկական բազայից մինչև որակյալ դասավանդողներ:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր մասնագիտության կայացման, զարգացման և հաջողության գրավականը դիմորդների մեծ հոսքի ապահովումն է: Այս նպատակով ֆակուլտետի մի խումբ աշխատակիցներ այցելում են մարզի հանրակրթական դպրոցներ, հանդիպում բարձր դասարանի աշակերտների հետ, լուսաբանում և ցուցադրում ֆակուլտետում իրականացվող աշխատանքները և հրավիրում մասնակցելու նախապատրաստական կուրսում սովորելու:

Ուսանողի միջազգային օրվան նույնօրեի 17-ին նվիրված Իջևանի քաղաքային պատկերասրահում կազմակերպվել է ցուցահանդես, որտեղ ներկայացված էին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվով 60 աշխատանքներ:

Կիսամյակի ընթացքում բոլոր կուրսերի ուսանողները դասախոսների ղեկավարությամբ կատարել են պլեներենային աշխատանքներ մարզի տարբեր գեղատեսիլ վայրերում:

Ֆակուլտետի գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով յուրաքանչյուր ստուգարքից և քննությունից անմիջապես հետո գիտատեխնիկական ամփոփ տվյալները փակցվում են հայտարարությունների տախտակին և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական կայք էջում: Թափանցիկ է իրականացվում նաև ամեն կիսամյակի կրթաթոշակների նշանակումը և զեղչերի կատարումը, քանզի վերջիններիս հատկացումները իրականացնում են ուսանողական կառույցները և ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ. Մարգարյանը:

Նա ներկայացրեց 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքները և նշեց, որ ստուգարքները և քննությունները անց են կացվել համաձայն հաստատված գրաֆիկի: Ֆակուլտետի բոլոր 88 ուսանողները մասնակցել են քննաշրջանին: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 71,59% անվճար համակարգում-100%, վճարովի համակարգում 63,24%, իսկ ըստ կուրսերի պատկերը հետևյալն է՝ „Կիրառական արվեստ” առաջին կուրս /9 ուսանող 88,89%/, „Դիզայն” առաջին կուրս /11 ուսանող

90,91%, „Կիրառական արվեստ” երկրորդ կուրս /9 ուսանող 77,78%/ , „Դիզայն” երկրորդ կուրս /11 ուսանող 81,82%/ , „Կիրառական արվեստ” երրորդ կուրս /17 ուսանող 64,71%, 6 ուսանողներ ունեն առարկայական պարտքեր, „Կիրառական արվեստ» չորրորդ կուրսում/31 ուսանող 58,06%, 13 ուսանողներ ունեն առարկայական պարտքեր, իսկ հինգ ուսանողներ գերազանցիկ են : Գնահատականների սպեկտրը լայն է և որպես կանոն բարձր է մասնագիտական բլոկի առարկաներից և ցածր հումանիտար և ոչ մասնագիտական առարկաներից:

Վերոհիշյալ փաստերը մանրամասնորեն քննարկվել և համապատասխան որոշումներ են կայացվել ֆակուլտետի ամբիոնների համատեղ 25.12.2015թ. կայացած նիստում, սակայն այստեղ կցանկանայի Ձեր ուշադրությունը հրավիրել չորրորդ կուրսի վրա, որտեղ ակադեմիական պարտքեր ունեցողները, ինչպես նաև անկարգապահ(չորս ուսանող ունեն 60 և ավելի դասաժամ անհարգելի բացակայություն, երկու ուսանող 90 և ավելի դասաժամ անհարգելի բացակայություն ) ուսանողներ են:

Ֆակուլտետում անցկացված բոլոր ստուգարքներն ու քննությունները վերահսկվել են ինչպես ֆակուլտետի ադմինիստրացիայի, այնպես էլ ուսումնամեթոդական վարչության կողմից, իսկ մասնագիտական բոլոր քննությունները գնահատվել հանձնաժողովի կողմից:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ցուցահանդեսների կազմակերպման և նրանցում պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման ուղիները: Համաձայն աշխատանքային պլանի երկրորդ կիսամյակում նախատեսված է բազմաթիվ միջոցառումներ ` այդ թվում “Մայրության և գեղեցկության” տոնին նվիրված ցուցահանդես` Իջևանի քաղաքային պատկերասրահում, իսկ ապրիլի քսանչորսին ` Մեծ եղեռնի նվիրված ցուցահանդեսներ, որոնց կազմակերպման և իրականացման համար առաջին կիսամյակում տրվել են հանձնարարականներ ուսանողներին և դասախոսներին, որպեսզի համապատասխան ժամկետներում ներկայացվեն համապատասխան աշխատանքներ, ինչից հետո մասնագիտական հանձնաժողովի որոշմամբ կառանձնացվեն ցուցադրությանը արժանի աշխատանքները:

Օրակարգի չորրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը և ներկայացրեց ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ. զարգացման Ռազմավարական ծրագիրը` հատկապես մատնանշելով ֆակուլտետներին /մասնավորապես Կիրառական արվեստի/ վերաբերող ենթակետերը:

Զեկուցողը առաջարկեց քննարկել ներկայացված ծրագիրը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկներ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ** – Հ.Ասատրյանը, Մ.Հարությունյանը, Ա.Միրզոյանը և Ս.Հովհաննիսյանը, որոնք հավանություն տվեցին նախագծին և առաջարկեցին .

- Խնդիր 1բ/ կետ 2.ավելացնել „Ֆակուլտետների կրթական գործունեության ինքնագնահատում”
- Խնդիր 1դ/ կետ 5-ի վերջին հատվածը կրկնում է խնդիր 1 ե/ կետ 1-ին
- Խնդիր 2 ա/ կետ 7-ը հանել, քանի որ 5 տարի հետո կունենանք չիրականացված ևս մեկ կետ
- Խնդիր 3 բ/ կետ 3 „ապահովել” բառը փոխարինել „աջակցել” կամ „նպաստել” բառով
- Խնդիր 4 բ/ կետ 3 հանել՝ անհրաժեշտ պայմաններ /մուտքեր/ չլինելու պատճառով
- Խնդիր 4 ա/ կետ 6-ի առաջին հատվածը վաղուց իրականացված է
- Խնդիր 5 բ/ կետ 1 „ ներքին համակարգչային ցանց” արտահայտության փոխարեն գրել „համակարգչային ներքին ցանց”
- Խնդիր 6 ա/ կետ 3 վերջին նախադասությունը կարևորությունից ելնելով դարձնել առանձին կետ
- Խնդիր 7 բ/ կետ 1 վերջին հատվածը վաղուց առկա է
- Խնդիր 8 բ/կետ 3 „ստեղծելու...” արդեն ստեղծված է

**ՈՐՈՇԵՑԻՆ** - ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ.Ռազմավարական ծրագիրին վերաբերվող վերոնշյալ առաջարկները ներկայացնել ՄԿՈԱ բաժին քննարկելու և վերջնական ձևակերպումներ տալու համար:

Օրակարգի հինգերորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա տեղեկացրեց երկրորդ կիսամյակի որոշ նախապատրաստական աշխատանքների մասին և նշեց, որ անհատական ծանրաբեռնվածությունների մեջ գրեթե փոփոխություններ չեն կատարվել , բացառություն է կազմել “Փիլիսոփայություն” առարկան, որի դասավանդումը կիրականացնի փ.գ.թ. դոցենտ Է.Կյուրեղյանը:

Այնուհետև նշվեց, որ դեռևս սկսած նախորդ ուստարվանից երկրորդ կիսամյակից ուսանողների ներկայացրած էսքիզները “Աշխատանք նյութի վրա” առարկայից, որոնք կարժանանան ամբիոնի մասնագետների բարձր գնահատականին, կազատվեն ուսումնական նյութեր ձեռք բերելու հոգսից( կտրամադրվեն կավ, ներկեր, հենքաթելեր և այլն) :

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ք.Հ.Մխիթարյան